ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական

հիմնադրամ» ՊՈԱԿ-ի տնօրեն

«18» հոկտեմբերի 2022թ.

ԿԱՐԾԻՔ

Տաթևիկ Վարդանի Ենոքյանի «Կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների ձևավորումը մայրենիի դասերին» թեմայով ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված ԺԳ. 00.02 «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (մայրենի) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման

Տաթևիկ Վարդանի Ենոքյանի ատենախոսության թեման արդիական է, քանի որ յուրաքանչյուր ժամանակաշրջանում կրթության մեջ ի հայտ են գալիս խնդիրներ, որոնք թելադրում են դրանց լուծման նոր ուղիների անհրաժեշտություն: Անձի հաղորդակցական կարողության ձևավորման գործընթացում կարևոր դեր ունի մայրենին տիրապետելը՝ որպես ազատ և նպատակային հաղորդակցվելու, սոցիալ-տնտեսական բոլոր բնագավառներում խոսքային արհեստավարժ գործունեություն ծավալելու, հանրային կյանքի տարբեր ոլորտներում տեղեկատվական հոսքին արագ արձագանքելու միջոց: Սույն ատենախոսության թեման վերաբերում է հենց այդ կարևոր խնդիրներից մեկի լուսաբանմանը՝ կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների ձևավորմանը մայրենիի դասերին:

Կրթության բովանդակության ժամանակակից ռազմավարության համաձայն՝ տարրական դպրոցում սովորողներին պետք է փոխանցել ոչ միայն առարկայական գիտելիքներ, այլև պիտի ուշադրություն դարձնել նրանց մտածողության բոլոր տեսակների զարգացմանը, գործնական կարողությունների և հմտությունների ձևավորմանը:

Անառարկելի է, որ տարրական դպրոցը կրթության այն կարևոր օղակն է, որտեղ իրականացվում է սովորողների լեզվամտածողության ձևավորումն ու անձի ներդաշ-

նակ զարգացումը, բառապաշարի հարստացումը, գրավոր և բանավոր խոսքի, հաղորդակցական կարողությունների ձևավորումը:

Սույն ատենախոսությունը նվիրված է տարրական դպրոցում մայրենիի ուսուցման կարևորագույն հարցերից մեկին՝ կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների ձևավորմանը, որը տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների աննախադեպ զարգացման արդի փուլում մեծապես տուժել է: Այն համահունչ է մանկավարժական գիտության զարգացման միտումներին: Եթե հաշվի առնենք նաև առարկայական չափորոշիչի և մայրենիի ծրագրի մեջ ամրագրված հաղորդակցական կարողությունների ձևավորմանը միտված պահանջները, ապա թեմայի արդիականությունն ու հրատապությունը հիմնավորվում է անմիջապես:

Ատենախոսությունն ունի *տեսական և գործնական* կարևոր նշանակություն: Տ. Ենոքյանը մանրամասն ուսումնասիրել և ժամանակակից մոտեցումների տեսանկյունից վերլուծել է սովորողների հաղորդակցական կարողությունների ձևավորմանն ուղղված ինչպես պատմական, այնպես էլ ժամանակակից տեսություններ, որոնք առկա են հայ և արտասահմանյան հոգեբանամանկավարժական, մեթոդական գրականության մեջ, վերլուծել է հանրակրթական պետական փաստաթղթերը, հանգամանորեն ուսումնասիրելով ՀՀ առաջինից չորրորդ դասարաններում գործող մայրենիի դասագրքերը, քննարկվող հարցի ներկայացվածությունը դրանցում, մեթոդական կառույցում ներառված հարցերի ու առաջադրանքների բնույթը, կատարել է արժեքավոր դիտողություններ, ճշգրտումներ, հավելումներ, առաջարկություններ:

Ատենախոսությունը բաղկացած է *ներածությունից, երեք գլխից (համապատասխան ենթագլուխներով), եզրակացություններից, առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածներից:* Աշխատանքի ընդհանուր ծավալը կազմում է համակարգչային շարվածքով 161 էջ:

Ատենախոսության *առաջին գլխում* հեղինակը խորությամբ վերլուծել է հիմնախնդրի վերաբերյալ մոտեցումների պատմական զարգացումները՝ անտիկ դարաշրջանից գալով մինչև մեր օրերը: Ընդգծելով անձի սոցիալականացման գործընթա-

ցում հաղորդակցման դերը և նշանակությունը՝ բացահայտել է նրա ձևավորման բաղադրիչները: Ատենախոսը հանգամանալից քննության է ենթարկել նաև կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների ձևավորման անհրաժեշտ պայմանները: Հատկանշական է, որ հաղորդակցական կարողության ձևավորման գործընթացում ատենախոսը կարևորել է նաև մեդիակրթությունը՝ ներկայացնելով իր իրականացրած փորձարարական աշխատանքի արդյունքները:

Հետազոտության թեմայի նպատակը և առաջադիր խնդիրների լուծման հնարավոր ուղիներն ատենախոսը քննել է ատենախոսության *երկրորդ գլխում՝* անդրադառնալով կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների զարգացման գործընթացի բովանդակությանը և իրականացման առանձնահատկություններին: Տաթևիկ Ենոքյանը, ամենայն մանրամասնությամբ վերլուծելով «Մայրենի»-ի առարկայական ծրագիրը, կարևորում է նաև մյուս ուսումնական առարկաների դերը կրտսեր դպրոցականների թե՛ հաղորդակցական կարողությունների, թե՛ խոսքի զարգացման գործընթացում: Ատենախոսը, վերլուծելով տարրական դասարանների մայրենիի դասագրքերն ու մեթոդական ուղեցույցները, նշում է, որ դասագրքերում զետեղված ճանաչողական բնույթի տարբեր ժանրերի գեղարվեստական ստեղծագործությունների շուրջ աշխատանքը կարող է նպաստել կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների զարգացմանը, եթե դրանց իրականացումը մեթոդապես ճիշտ կատարվի: Կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների զարգացման գործընթացի արդյունավետության ապահովման նպատակով ատենախոսի փորձարկած և արդյունքների հաշվառմամբ առաջարկած մեթոդներն ու հնարները բազմազան են. օրինակելի լեզվական կառույցները, կարդացածի բովանդակության վերաբերյալ նկարագրություններ կատարելը, բեմականացումները, երկխոսությունների առանձնացումը, դերային խաղերը, բանավեճերը, հարցազրույցները և այլն:

Ատենախոսը *երկրորդ գլխում* ներկայացրել է նաև տարրական դասարանների ուսուցիչների շրջանում իրականացրած հարցախույզի արդյունքները: Վերլուծելով

հարցախույզի արդյունքները՝ եկել է այն եզրահանգման, որ հարցմանը մասնակից ուսուցիչները կարևորում են կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների զարգացման անհրաժեշտությունը, սակայն նրանց մի մասը հստակ չի պատկերացնում, թե հաղորդակցական կարողությունը ինչ բաղադրիչներ ունի, և այդ ուղղությամբ մեթոդական ինչ աշխատանքներ են անհրաժեշտ կատարել: Այս հանգամանքը Տ. Ենոքյանը պայմանավորում է նրանով, որ չնայած կան սովորողների հաղորդակցական կարողությունների զարգացմանը միտված հայերեն հոդվածներ, ձեռնարկներ, սակայն չկա հենց այս տարիքի համար հստակ մշակված հայալեզու մեթոդիկա, ուստի ուսուցիչների մեծ մասը հստակ չի պատկերացնում կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների զարգացման մեթոդիկան և արդյունքում համակարգված աշխատանք չի կարողանում իրականացնել: Ուսումնասիրությունների արդյունքում ատենախոսը բացահայտել է, որ նույնիսկ ուսուցիչների վերապատրաստման դասընթացների թեմաներում ընդգրկված չէ որևէ թեմա, որն առնչվում է մայրենիի դասերի ժամանակ կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների ձևավորման մեթոդիկային:

Երկրորդ գլխում ատենախոսը հանգամանալից անդրադարձել է կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների տեսանկյունից տարիքային առանձնահատկություններին և, հետազոտության հիմնախնդրով պայմանավորված, բացահայտել է կրտսեր դպրոցականների՝

- ակտիվ և պասիվ բառապաշարների մակարդակները,
- հաղորդակցական տարբեր իրավիճակներում կապակցված խոսք կառուցելու կրտսեր դպրոցականների կարողության մակարդակները,
- կապակցված խոսքում տարբեր խոսքի մասերի գործածման տարբեր հաճախականությունը:

Ատենախոսը հետազոտության արձանագրման փուլում ներկայացրել է փորձարարական դասարաններում իրականացրած ուսումնասիրության արդյունքները: Հետազոտություններն իրականացվել են 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ փորձարարական և

ստուգողական դասարաններում: Փորձարարական աշխատանքի արձանագրման փուլի արդյունքները ներկայացվել են համապատասխան տրամագրերում, ինչն արժեքավոր փաստ է և բացահայտում է կրտսեր դպրոցականների ակտիվ և պասիվ բառապաշարի, հաղորդակցական տարբեր իրավիճակներում կապակցված խոսք կառուցելու, կապակցված խոսքում խոսքի մասերի գործածման տարբեր հաճախականության մակարդակները: Ուսումնասիրության արդյունքում ատենախոսը եկել է այն եզրահանգման, որ տարրական դասարաններում մայրենիի դասերի ընթացքում կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների զարգացման գործընթացում առաջնային են սովորողների բառապաշարի հարստացումը, լեզվական տարրական գիտելիքների ձեռքբերումը՝ խոսքային տարբեր իրավիճակներով պայմանավորված, դրանց նպատակահարմար ու տեղին գործածելու կարողության մշակումը, աշակերտների խոսքային գործունեության կարողությունների կատարելագործումն ու զարգացումը: Այս առնչությամբ ատենախոսը կատարել է մեթոդական կարևոր ընդհանրացումներ:

Ատենախոսության *երրորդ գլխում* քննարկվում է հիմնախնդրին վերաբերող մեթոդական համալիրը, ներկայացվում են իրականացրած փորձարարությունն ու արդյունքները, որոնք ամբողջությամբ վերլուծվում են հեղինակի կողմից: Բավականին հարուստ ու գիտական խոր վերլուծություններով աչքի է ընկնում Տ. Ենոքյանի ատենախոսության հետազոտական-փորձարարական մասը, որտեղ ատենախոսը հիմնավորում է տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման արդյունավետությունը հաղորդակցական կարողությունների ձևավորման գործընթացում:

Դիտարկումները ցույց են տալիս, որ Տաթևիկ Ենոքյանը կատարել է նկատելի փորձարարական աշխատանք, ինչը համակարգված, հիմնավորված ներկայացված է աշխատանքում. կան ուշագրավ վերլուծություններ, արված են համապատասխան եզրակացություններ և առաջարկություններ:

Աշխատանքի երրորդ գլուխն ավարտվում է թեմայի հիմնախնդրի ուղղությամբ իրականացված փորձարարական աշխատանքների ընթացքի վերլուծությամբ և արդյունքների հիման վրա մշակված մեթոդական առաջարկություններով:

Փորձարարական-ստուգողական փուլով իրականացրած հետազոտական աշխատանքները վկայում են, որ ատենախոսը մանրամասնորեն մշակել և փորձարկել է իր առաջարկած մեթոդական համալիրը (իրադրային խաղեր, երկխոսություններ, էլեկտրոնային խաղվարժություններ)՝ ուղղված կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների ձևավորմանը: Ատենախոսության մեջ հաղորդակցական կարողությունների զարգացման աշխատանքների մեթոդական համալիրը ներկայացված է համակողմանիորեն: Ուշագրավ են առաջարկվող իրադրային խաղերը, որոնց կիրառումը միտված է թե՛ հաղորդակցական ու համագործակցային կարողությունների, թե՛ մտածողության, թե՛ բանավոր ու գրավոր կապակցված խոսքի զարգացմանը:

Հեղինակի մշակած մեթոդական համալիրը՝ ուղղված կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների ձևավորմանը, հարուստ է գործնական առաջադրանքներով, խաղերով: Այն աչքի է ընկնում իր նոր մոտեցումներով, և, որ կարևորն է, հաշվի են առնված նաև սովորողների տարիքային առանձնահատկությունները, նրանց խոսքի զարգացման մակարդակները:

Այդ մեթոդական համալիրը կնպաստի ոչ միայն կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների ձևավորմանը, այլև բառապաշարի հարստացմանը, լեզվական տարրական գիտելիքների ամրապնդմանը, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու կարողությունների զարգացմանը, բարեկիրթ շփմանը:

Ատենախոսության վերջում ներկայացված են հավելվածներ, որոնք կատարված աշխատանքի վկայություն են:

Քննարկվող ատենախոսությունը գիտահետազոտական աշխատանք է, որն աչքի է ընկնում ամբողջականությամբ, ավարտունությամբ, նյութի շարադրման տրամաբանական հաջորդականությամբ, մատչելիությամբ, գիտական պատշաճ ոճով: Համոզիչ են տրված եզրահանգումները, ինչպես նաև ատենախոսությունից բխող ընդհանուր հետևությունները, որոնք հիմնավորված են հեղինակի կողմից: Ուշագրավ են

այժմ խիստ պահանջված թվային մեդիագործիքները նպատակային և գրագետ կիրառելու ուղղությամբ մշակած առաջադրանքները:

Սեղմագրում լիովին արտացոլված են ատենախոսության հիմնական դրույթները և բովանդակությունը:

Այսպիսով, Տաթևիկ Ենոքյանի «Կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների ձևավորումը մայրենիի դասերին» վերնագրով ատենախոսության բովանդակությունը համապատասխանում է թեմայի հետազոտական նպատակներին, նշված են առաջադիր խնդիրների լուծման ուղիները, ասելիքը ներկայացված է հստակ շարադրանքով, եզրակացությունները բխում են առաջադրված հետազոտության խնդիրներից: Ներկայացված հիմնախնդիրն ունի գիտատեսական, գիտագործնական կարևոր նշանակություն տարրական դասարաններում մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի հարցերին առնչվող բոլոր գործընթացներում, իսկ հետազոտության նյութերն ու մշակված առաջարկությունները կարող են օգտակար լինել բուհերի՝ համատասխան մասնագիտական բաժինների ուսանողներին, հանրակրթական դպրոցի մայրենիի ուսուցիչներին, դասագրքաստեղծ մասնագիտական խմբերին և վերապատրաստման դասընթացներ վարող մասնագետներին:

Գնահատելով Տաթևիկ Ենոքյանի իրականացրած ուսումնասիրությունն ու դրա արդյունքը՝ ամբիոնը, այնուամենայնիվ, անհրաժեշտ է համարում ներկայացնել հետևյալ դիտողություններն ու առաջարկությունները՝ միաժամանակ անդրադառնալով աշխատանքում տեղ գտած *վրիպակներին, բառագործածության ու կետադրական սխալներին:* Այսպես՝

Գնահատելով Տաթևիկ Ենոքյանի իրականացրած ուսումնասիրությունն ու դրա արդյունքը՝ ամբիոնը, այնուամենայնիվ, անհրաժեշտ է համարում ներկայացնել հետևյալ դիտողություններն ու առաջարկությունները՝ միաժամանակ անդրադառնալով աշխատանքում տեղ գտած *վրիպակներին, բառագործածության ու կետադրական սխալներին:* Այսպես՝

1. Ատենախոսն իր փորձարարական ուսումնասիրությունների արդյունքները ներկայացրել է ընդհանրական՝ առաջինից չորրորդ դասարանները միասին: Առավել շահեկան կլիներ, եթե ատենախոսը դասարան առ դասարան ներկայացներ հետազոտության արդյունքները՝ առաջարկելով յուրաքանչյուր դասարանի համար նախատեսված հիմնախնդրի լուծման տարբերակներ:

2. Ատենախոսն իր հետազոտական ուսումնասիրությունները հիմնականում իրականացրել է Վ. Սարգսյան «Մայրենի 1», Վ. Սարգսյան և ուրիշներ «Մայրենի 2», «Մայրենի 3», «Մայրենի 4» դասագրքերի շրջանակներում: Աշխատանքն առավել ամբողջական կլիներ, եթե ուսումնասիրվեին նաև Ա. Քյուրքչյան, Լ. Տեր-Գրիգորյան «Մայրենի 1», «Մայրենի 2», Դ. Գյուրջինյան, Ն. Հեքեքյան «Մայրենի 3», «Մայրենի 4» հեղինակային խմբերի դասագրքերը:

3. «*Կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների զարգացման հիմնախնդրի տեղը ՀՀ տարրական դպրոցի կրթական փաստաթղթերում*» վերնագրով ենթագլխում (2.1.) ատենախոսը վերլուծել է 2011թվականին ընդունված «Մայրենիի» չափորոշիչները և ծրագրերը (էջ 51; 52): Աշխատանքը կշահեր, եթե ուսումնասիրվեին նաև 2021 թվականին վերամշակված և ընդունված նոր չափորոշիչներն ու մայրենիի ծրագրերը (գրականության ցանկում ևս հին չափորոշիչն ու ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանն են ներկայացված (N40,41)):

4. Աշխատանքի առաջին գլխում հեղինակը ներկայացնում է «*Կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների ձևավորման համակարգը*», որտեղ, կարծում ենք, նպատակահարմար էր քննարկել նաև «Կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների հիմնախնդրի տեղը ՀՀ տպրրական դպրոցի կրթական փաստաթղթերում» հարցը, ինչպես նաև ենթագլխով անդրադառնալ *կրտսեր դպրոցականների տարիքային առանձնահատկությունների հաշվառման խնդրին հաղորդակցական կարողությունների զարգացման գործընթացում*:

5. Աշխատանքի 1.2. ենթագլուխը վերնագրված է «Հաղորդակցական կարողությունների ձևավորման գործընթացի հիմնական բաղադրիչները», որի բովանդակութ-

յան մեջ խոսվում է ոչ թե աշակերտի հաղորդակցական կարողությունների ձևավորման գործընթացի բաղադրիչների մասին, այլ տարբեր հեղինակների կողմից նշված, ուսուցչի՝ հաղորդակցական կարողությունների ձևավորման գործընթացին վերաբերող մեկնաբանություններին:

6. Տրամաբանական կլիներ, եթե *3.2. և 3.3.* ենթագլուխները միավորված լինեին մեկ ենթագլխում՝ որպես կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների զարգացման միջոցներ: Մեր կարծիքով, 1.4. կետը («*Մեդիան և մեդիատեխնոլոգիաները որպես կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների ձևավորման միջոցներ*») նախընտրելի կլիներ քննարկել 3-րդ գլխում:

7. 3-րդ կետում նշված է (էջ 9-ը), որ «*...հեղինակը մշակել և փորձարարությամբ հիմնավորել է վարժությունների համալիր*», մինչդեռ աշխատանքի նպատակն էր մշակել և ՀՀ տարրական դպրոցում ներդնել կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների զարգացմանը նպաստող մեթոդական համալիր:

8. Հավելված 5-ում ներկայացված են առաջինից չորրորդ դասարանների ***«Խոսք և հաղորդակցում»*** բաղադրիչի դասապլաններ: Ցանկալի կլիներ որևէ դասարանի որևէ բնագրով կազմվեր ամբողջական դասի պլան՝ առաջնահերթություն սահմանելով աշակերտների հաղորդակցական կարողությունների զարգացումը: Իսկ նշվածը (էջ 63; էջ 70), որ դասագրքերում քիչ են հաղորդակցական կարողություններին նպաստող հարցերն ու առաջադրանքները, ընդունելի չէ, քանի որ գործող դասագրքերի յուրաքանչյուր բնագրի տակ տրված են մտածված, ուսանելի, բնութագրող հարցեր և առաջադրանքներ, որոնք մեծ մասամբ նպաստում են սովորողների հաղորդակցական կարողությունների զարգացմանը, հեղինակն էլ բերել է բազում օրինակներ (էջ 63-69):

Վրիպակներից, *բառագործածության ու կետադրական սխալներից են՝*

- Բառերի մեջ կան անհարկի գծիկներ (էջ 51), համակարգչային վրիպակներ՝ ...հիմնականում նպաստում եմ (>են) (էջ 61), ...պայմանավորված *նպատակերով*

(>նպատակներով) (էջ 101), «...նյութը գրավիչ ու **դյուրըմբռնելի** (> *ըմբռնելի*) ներկայացնել...» (էջ 100):

- ***Կետադրական սխալներ***՝ «Այսպիսով՝ (>այսպիսով,) մեր հետազոտության թեմայի արդիականությունը պայմանավորված է...» (էջ 5): «Ընդհանուր առմամբ, այն ուսումնասիրում է նշաններն ու նշանային համակարգերը որպես (>որպես՝) մարդկային հասարակության, բնության, տեղեկատվության ապահովման, փոխանցման և վերարտադրման միջոց» (էջ 12):
- ***Բառագործածության սխալ***՝ «...տեխնոլոգիաների աննախադեպ զարգացման արդի փուլում մեծապես *խարխլվել* է անձի առերես հաղորդակցման գործընթացը» (էջ 4):
- ***Քերականական սխալ***՝ «...փորձարարական դասարաններում *իրականացրեցինք* աշխատանքներ այդ ուղղությամբ» (էջ 48):

Նշված դիտողություններն ունեն մասնակի բնույթ և չեն ստվերում ատենախոսության գիտամեթոդական արժեքը, որն ինքնուրույն գիտատեսական, գիտագործնական նշանակությամբ և կարևորությամբ ամբողջական գիտական հետազոտություն է:

Կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների ձևավորման ուղղությամբ հեղինակի մշակված մեթոդական համալիրը կարելի է հիշյալ դիտողությունների ու առաջարկների հիման վրա վերանայելուց հետո տպագրել և ներկայացնել տարրական դասարանների ուսուցիչներին՝ որպես մեթոդական ուղեցույց:

Այսպիսով, ատենախոսության բովանդակությունը համապատասխանում է թեմայի հետազոտական նպատակներին, նշված են առաջադիր խնդիրների լուծման ուղիները, ասելիքը ներկայացված է կուռ շարադրանքով, տրված են հստակ ձևակերպումներ, եզրակացությունները բխում են կատարված հետազոտությունից, ուստի ամբիոնը գտնում է, որ քննարկվող ատենախոսությունը կարելի է երաշխավորել հրապարակային պաշտպանության. այն ունի գիտատեսական, գիտագործնական կարևոր նշանակություն տարրական դպրոցում մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի հարցերին առնչվող բոլոր գործընթացներում, իսկ հետազոտության նյութերը և մշակած երաշխավորությունները կարող են օգտակար լինել բուհերի՝ համապատաս-

խան բաժինների ուսանողներին, հանրակրթական դպրոցի մայրենիի ուսուցիչներին, դասագրքաստեղծ մասնագիտական խմբերին և վերապատրաստման դասընթացներ անցկացնող մեթոդիստներին:

Տաթևիկ Վարդանի Ենոքյանի **«Կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների ձևավորումը մայրենիի դասերին»** թեմայով թեկնածուական ատենախոսությունն արդիական է, ունի գիտական նորույթ, տեսական և գործնական նշանակություն, բավարարում է ՀՀ ԲՈԿ-ի պահանջները, համապատասխանում է մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանաշնորհման 7-րդ կետի պահանջներին և ԺԳ.00.02 -«Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (մայրենի) մասնագիտության թվանիշին, ուստի այն կարող է ներկայացվել հրապարակային պաշտպանության, իսկ ատենախոս Տաթևիկ Վարդանի Ենոքյանն արժանի է իր հայցած մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչի ԺՊ՝

Ա. Ա. Ավագյան (բ.գ.թ., դոցենտ)

Մանկավարժության ամբիոնի վարիչի ԺՊ՝

Լ. Հ. Ղուկասյան(մ.գ. թ., դոցենտ)

Ամբիոնների վարիչների ստորագրությունը հաստատում եմ:

ՇՊՀ-ի գիտքարտուղար՝ Կ. Ռ. Պետրոսյան (կ. գ. թ., դոցենտ)